

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԺԱԿԱՏՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԲՈԼՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ՝ ՆՐԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

ՍՏՈԿՀՈԼՄ, 24 նոյեմբերի (ՏԱՍՍ).— *Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիան ընդունեց աշխարհի ժողովուրդներին ուղղված դիմում։ Դիմումի մեջ ասվում է.*

«Մինչդեռ Կորեայում ու Հնդկաչինում պատերազմի ավարտումը և «Եվրոպական պաշտպանական միավորման» նախագծի մերժումը ամբողջ աշխարհին տվեցին պետություններին պառակտող վեճերը վերացնելու հույս, Լոնդոնի ու Փարիզի համաձայնագրերը ժողովուրդներին կանգնեցնում են ահեղ վտանգի առջև, որ նրանցից յուրաքանչյուրի համար նշանակում է «վերմախտ»ի վերածնումը։ Մինչդեռ արվել են նոր առաջարկներ, որոնց իրագործումը կարող է ապահովել Գերմանիայի միավորումը, Լոնդոնի ու Փարիզի համաձայնագրերի իրագործումը ծանր հարված կհասցներ գերմանական ժողովրդի դեմոկրատական ու ազգային ուժերին, կբորբոքեր գերմանական միլիտարիզմի հավակնությունները և կօրինականացներ Գերմանիայի ու Եվրոպայի պառակտումը։

Մինչդեռ զինաթափման և մասսայական ոչնչացման զենքի արգելման հուզիչ հարցի շուրջը ՄԱԿ-ում ձեռք բերված պրոգրեսը ամրապնդում է խաղաղության հույսերը, Լոնդոնի ու Փարիզի համաձայնագրերի իրագործումը կհանգեցներ սպառազինությունների նոր մրցավազքի, որի բերը շուտով անտանելի կդառնար բոլորի համար։

Պառլամենտների կողմից այդ համաձայնագրերի վավերացումը ոչ միայն չէր պահպանի բանակցությունների հնարավորությունը, այլև կստեղծեր Եվրոպայի ու ամբողջ աշխարհի խաղաղության համար նոր վտանգների հղի դրություն։

Ժողովուրդները այսպիսով կանգնեցվել են դրամատիկ երկընտրանքի առջև. կա՛մ բանակցություններ, որոնք կարող են պսակվել խելացի համաձայնությամբ, կա՛մ էլ կամայականության ակտ, այսինքն Արևմտյան Գերմանիայի վերազինումը և նրան ռազմական պակտի մեջ մտցնելը, որը կարող է ոչնչի հավասարեցնել միջազգային լարվածության թուլացումը։

Ժողովուրդները պետք է դիմադրեն Լոնդոնի ու Փարիզի համաձայնագրերի վավերացմանը։

Ժողովուրդները պետք է պահանջեն անհապաղ բանակցություններ սկսել չորս տերությունների միջև՝ ազատ ընտրությունների միջոցով Գերմանիան վերամիավորելու, ինչպես նաև Ավստրիայի հետ պետական պայմանագիր կնքելու նպատակով։

Ժողովուրդները պետք է պահանջեն անհապաղ բանակցություններ սկսել բոլոր եվրոպական պետությունների միջև՝ անկախ նրանց հասարակարգից, նպատակ ունենա-

լով ապահովել նրանց անվտանգությունը և ընդհանուր բարգավաճումը նրանց բոլորի համագործակցության միջոցով։

Ոչ մի կառավարություն, ոչ մի պաշտամենտ իրավասու չեն տնօրինելու ժողովրդի բախտը՝ նրա կամքին հակառակ։ Ժողովուրդները թույլ չեն տա, որ անուղղելին կատարվի։

Նրանք թույլ չեն տա Գերմանիայի վերազինման իրագործումը և իրենց համատեղ գործողություններով ուղի կբացեն Եվրոպայի անվտանգության և ամբողջ աշխարհի խաղաղության համար։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ստոկհոլմ, 23 նոյեմբերի 1954 թվականին։

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, 26 նոյեմբերի 1954 թ.)

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԵՍԻԱՅԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՀԱՄԱՐ և ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՁԵՆՔԻ ԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՄԱՐ ԽԱՂԱՂԱՍԵՐ ՈՒԺԵՐԻ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

ՍՏՈԿՀՈԼՄ, 24 նոյեմբերի (ՏԱՍՍ).— *Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիան ընդունեց բանաձև «Զինաթափման համար և մասսայական ոչնչացման զենքի արգելման համար խաղաղասեր ուժերի պայքարի մասին»։ Բանաձևում ասվում է.*

«Չորս տարի առաջ Ստոկհոլմում հրապարակվեց ատոմային զենքը լիովին արգելելու կոչը։

Այդ կոչի առթիվ բոլոր ժողովուրդների մղած կամպանիան արգելեց ատոմային ռումբերի կիրառումը Կորեայում և Հնդկաչինում։ Ժողովուրդների համառ պայքարը կառավարություններին ստիպեց նաև դադարեցնել պատերազմական գործողությունները Կորեայում և Հնդկաչինում։

Սակայն այսօր մենք նորից կանգնած ենք պատերազմի վտանգի առջև, որը բխում է սպառազինությունների մրցավազքի ուժեղացումից և մասսայական ոչնչացման ավելի ու ավելի ավերիչ միջոցների անընդհատ զարգացումից։

Ժողովուրդների կամքը կարող է և պետք է մի անգամ ևս ապահովի այդ վտանգի վերացումը։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը գոհունակությամբ նշում է զինաթափման և ատոմային զենքի արգելման հարցի քննարկման գործում ՄԱԿ-ում ձեռք բերված պրոգրեսը։ Նա ընդգծում է, որ այդ արդյունքը ձեռք է բերվել բանակցությունների մեթոդով, որ վկայում է կոմպրոմիսի միջոցով համաձայնության հասնելու հնարավորությունը։ Հենց այդպիսի մեթոդն էլ Գլխավոր Ասամբլեային հնարավորություն տվեց միաձայն ընդունելու բանաձևը, որը ուղի է բացում այդ պրոբլեմների լուծման համար։

Բայց Արևմտյան Գերմանիան վերազինելու և նրան Լոնդոնի ու Փարիզի համաձայնագրերի շրջանակներում ռազմական բլոկի մեջ մտցնելու ուղղությամբ արևմտյան տերությունների ձգտումը քայքայում է զինաթափման նպատակին ուղղված ջանքերը և հարվածի տակ է դնում արդեն ձեռք բերված արդյունքները։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը ողջունում է ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման վերաբերյալ ներկայումս վարվող բանակցությունները։ Միևնույն ժամանակ նա հայտարարում է, որ մարդկությունը միջուկային էներգիան խաղաղ արտադրության համար ի վիճակի կլինի լիովին կիրառելու միայն այն բանից հետո, երբ արգելվի այդ էներգիայի օգտագործումը ռազմական նպատակներով։ Նա համոզված է, որ այդ ասպարեզում համաձայնությունը միանգամայն հնարավոր է, ինչպես նաև հնարավոր է բավարար մեխանիզմ ստեղծել խիստ տեսչության ու վերահսկողության իրականացնելու համար։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը մեծ տերություններին կոչ է անում կրկնապատկել ջանքերը այժմ քննարկվող առաջարկների հիման վրա այդ կարևոր հարցերի շուրջը անհապաղ համաձայնության հասնելու համար։ Քանի այդ նպատակը ձեռք չի բերված, նա պահանջում է, որ մեծ տերությունները անհապաղ համաձայնության հասնեն ատոմային ու ջրածնային ռումբերի բոլոր փորձնական պայթեցումները արգելելու շուրջը, որոնք, գիտության ժամանակակից մակարդակի պայմաններում, հեշտությամբ և իսկույն իմացվում են։ Նա հաստատակամորեն պահանջում է նաև, որ բոլոր

կառավարությունները առանց բացառության անհապաղ պարտավորություններ ստանձնեն որևէ պատրվակով չգործադրել միջուկային զենք։

Այնուամենայնիվ, այդ քայլերը կհանդիսանային միայն առաջին անհետաձգելի միջոցառումները, որոնց իրագործումը ոչ մի չափով չպետք է կասեցնի գլխավոր պրոբլեմի լուծումը, այն է՝ մասսայական ոչնչացման բոլոր միջոցների՝ ատոմային, բակտերիոլոգիական ու քիմիական միջոցների վերացումը և սպառազինությունների ընդհանուր կրճատումը։ Ավելին. այդ միջոցառումները ինքնին մեծ քայլ կլինեն ավելի լայն ու ավելի կարևոր համաձայնության ճանապարհին, որը նախատեսի սպառազինությունների ընդհանուր կրճատում, մասսայական ոչնչացման զենքի արգելում և միջազգային այնպիսի վերահսկողության սահմանում, ըստ որի բոլոր երկրները պետք է ուղարկվեն տեսչական խմբեր։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը հաստատակամորեն պահանջում է, որ ընդհանուր ու վերահսկվող զինաթափման շնորհիվ ազատվող բոլոր միջոցներն օգտագործվեն ժողովրդի կենսամակարդակի բարձրացման համար, մասնավորապես, տնտեսապես հետամնաց երկրներում։

Նա ամբողջ աշխարհի ժողովուրդներին կոչ է անում ամենուրեք ու միշտ պահանջել սպառազինությունների ընդհանուր կրճատում և մասսայական ոչնչացման զենքի արգելում։ Առանց դրա խաղաղության քաղաքականություն հնարավոր չէ։

Ժողովուրդների կամքը կարող է և պետք է ապահովի այդ նպատակների իրագործումը, եթե ժողովուրդները միավորվեն այդ սրբազան պայքարում և ամենայն վճռականությամբ կառավարություններին ու ՄԱԿ-ին հայտարարեն խաղաղության, փոխըմբռնման և մարդկային համերաշխության իրենց հրամայական ձգտումը։

Ստոկհոլմ, 23 նոյեմբերի 1954 թվականի»։

ԽԱՂԱՂԱՍԵՐ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՍԱՄԲԼԵԱ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստոկհոլմ, 24 նոյեմբերի (ՏԱՍՍ).—Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիան ընդունեց կոչ «Խաղաղասեր ուժերի ներկայացուցիչների Համաշխարհային Ասամբլեա հրավիրելու մասին»։ Կոչում ասվում է.

«Ներկայումս, երբ այնպես մեծ են խաղաղության ամրապնդման հնարավորությունները, առաջանում են նոր վտանգներ, որոնք ընդունակ են ի չիք դարձնելու նաև այդ հնարավորությունները։

Միայն հենց ժողովուրդների հզոր շարժումը կարող է արգելք հարուցել աշխարհի պառակտմանը միմյանց հակադիր բլոկների, թույլ չտալ այն բանակների վերածնումը, որոնք անցյալում արդեն մարդկանց բերեցին այնքան արցունք ու վիշտ, և մարդկությանը փրկել ռազմական ծախսերի ծանր բեռից։ Միայն այդ հզոր շարժումը կարող է ապահովել պետությունների համագործակցությունը հանուն նրանց բարգավաճության, հանուն նրանց անկախության պահպանման և ընդհանուր անվտանգության։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը հանդիսավոր կերպով դիմում է բոլոր խաղաղասեր ուժերին, բոլոր տղամարդկանց և կանանց, որոնք ցանկանում են ապրել առանց տագնապի, առանց անվստահության և ատելության՝ ժողովուրդների հարաբերություններում։ Նա կոչ է անում նրանց՝ միավորել իրենց ջանքերը, քանի ուշ չէ։

Խաղաղության Խորհուրդը որոշում է ընդունում 1955 թվականի մայիսի երկրորդ կեսին բոլոր խաղաղասեր ուժերի ներկայացուցիչների Համաշխարհային մեծ Ասամբլեա հրավիրելու մասին։

Ստոկհոլմ, 23 նոյեմբերի 1954 թվականի»։

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԵԾ ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ստոկհոլմ, 24 նոյեմբերի (ՏԱՍՍ).— *Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիան դիմել է կուլտուրական մեծ տարեդարձներ անցկացնելու մասին հետևյալ կոչով.*

«1955 թվականի ընթացքում ամբողջ աշխարհի ժողովուրդները նշելու են համաշխարհային կուլտուրայի մեծ ներկայացուցիչների հետևյալ տարեդարձները.

Շիլլեր — մահվան 150-ամյակը։

Միցկևիչ — մահվան 100-ամյակը։

Մոնտեսքյու — մահվան 200-ամյակը։

Անտերսեն — ծննդյան 150-ամյակը։

Սերվանտես — «Դոն Կիխոտի» առաջին հրատարակության լույս ընծայման 350-ամյակը։

Ուիտմեն — «Խոտի տերևները» գրքի առաջին հրատարակության լույս ընծայման 100-ամյակը։

Կուլտուրական մեծ տարեդարձների անցկացումը ժողովուրդներին կօգնի ապահովելու բարեկամական կապերը՝ անկախ սահմաններից, ավելի լավ ճանաչելու միմյանց և ամրապնդելու խաղաղ համագործակցությունը։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը դիմում է բոլոր ժողովուրդներին, գրողներին ու նկարիչներին, գիտնականներին, պատմաբաններին, ուսուցիչներին, կուլտուրական և մասսայական բոլոր կազմակերպություններին՝ կոչ անելով մասնակցել կուլտուրական այդ տարեդարձների անցկացմանը։

Ստոկհոլմ, 23 նոյեմբերի 1954 թվականի։

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, 27 նոյեմբերի 1954 թ.)